

Թող անին բարի եւ ուսումնական  
 Հայկայ որդիներ շատան օրէ ց'օր.  
 Կ'ինդայ յայնժամ եւ խեղճ Հայաստան,  
 եւ Հայու կեանքին վնի նոր բարօր:

Տացէ ճն երկին  
 Սէր մեզ կամողին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵՂԵԱՆ:

**ՅՈՐԴՈՐ ՔԱԶԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԷԻ  
 Ի ՄԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ,**

Մեր նախահօր \*) դուք հարազատ զաւակներ,  
 Քաջահորով անպարտելի հուժկուներ,  
 Արդէն ժամ է մեր թշնամեաց ընդ յառաջ  
 Գիմել մի սիրտ և մի հոգի անվնէհեր:  
 Հաստատուն յոյս, և սուրբ հաւատ, նա և սէր,  
 եւ ջերմ աղօթս վերուզղեցէք դուք առ Տէր.  
 Ի սուրբ սրտէ, որպէս ընծայ — պատարագ,  
 Թող ծառանան դէպ ի յերկինս ի նուէր:  
 Հապա, իմ քաջք և հարազատք, միաբան  
 Մի՛ յապաղէք տալ ջարդ գնդին պարսկական.  
 Արիասիրտ և վնհ հոգուով կանգնեցէք  
 Ընդդէմ անկրօն սև խուժանին Սասանեան:  
 Առէք նիզակ, փայլուն սուսեր և վահան,  
 Միմեանց օգնել, զոն, փութացէք անրաժան.  
 Հագէք զբաշ, և սաղաւարտ զիք ի զուխ,  
 Ընդ թշնամեաց պատերազմէք անսասան:  
 Դե՛հ, քաջացիր վնհ դու Արտակ Պայլունի,  
 Ահա ընկեր և քեզ Տաճատ Գընթունի,  
 Եթէ բաւ չէ, իմ մարտակից քաջ ընկեր,  
 Առ դու ընդ քեզ քաջ ներսէհ հաջբերունի:  
 Օն, քաջացէք Համազասպ Համազասպեան,  
 Անվախ մանուկ քաջ Գարեգին Սրուանձտեան.  
 Ազգի բաղդը ձեր ձեռքին է այժմօ՛ն,  
 Խորէն, Արսէն և Հրմայեակ Գիմարսեան:  
 Յառա՛ջ խաղա, հզօր առիւծ Արշալիր,  
 Թող նետերդ չանցնեն ի զուր ի նանիր.  
 Անպարտելի և զոռ մանուկ դու Վահան,  
 Կոտորած տուր մեր թշնամեաց անխոր:  
 Տեսէք, ահա ձեր յառաջն Աւարայր կայ,  
 եւ Տղմուտ գետն խոխոջալով խրախոյս տայ —

(\*) Հայր:

Չը ինչպէս որք հասարէց՝ և զանէլ  
 Վասն ազգութեան և աշխարհին անխնայ:  
 Գիտեմ այսօր պատրաստ են մեզ պատկներ,  
 եւ պիտ' առնենք երկնքու՛մը մեր վօրձեր.  
 Տեսէք ահա — կապոյտ երկինք պատառուած,  
 Մեզ է կանչում պսակ ձեռին մեր ընկեր:  
 Աջն Աստուծոյ օգնական Ձեզ թող լինի,  
 Որ կոտորէք անձիւ զօրքըն Վասակի.  
 Լաւ է մի օր մեզ քաջութեամբ մեռանել,  
 Քան թէ կրրել մեր վերայ անուն չարի:  
 Աւրեմն ով քաջք, ահա Վարդան և ձեր հետ  
 Կաշխատի, որ թշնամիքըն առնէ անհետ —  
 Չար Վասակին և իւր զօրքը միաբան,  
 Գարձուցանել դէպ ի փախուստ — յետ ընդ յետ:  
 ԱՂԷՔՍԱՆԳԻ ՄԻԹԱՐԵԱՆՆԵՐ:  
 ՅԱՂԷՔՍԱՆԳԻ:

**ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ.**

Պանգուխտ եմ ես, օտար եմ ես յայս երկիր,  
 Սիրտս տրխուր, միտքս մոլոր ինձանից  
 Դեռ պատանեակի դեռ նոր ծաղկած ի հասակ,  
 Բաղդը զըկեց դեռ մայրենի սուրբ զրկից:  
 Դեռ նոր ծաղկած վարդի նման նորարաց  
 Գոզցես մաշին կենացս օրեր անխնամ,  
 Հեռի եմ ես Հայրենիքէս սիրասուն.  
 Ուր երջանիկ կեանք վարէի յարածամ  
 Այն ինչ թաղունք ծառոցն ի թուփ ճոռուղեն,  
 Աչացս հանդէպ տանին, բերեն ըիւր ցաւեր,  
 Գոչեմ սրտէս, դուք ով թաղունք գեղերև  
 Ունի՛ք արդեօք Հայրենիքէս խապրիկներ:  
 Մինչ խոխոջան մարգարտի պէս առուակներ  
 Ծաղկանց մեջէն սահին գնան սրընթաց,  
 Ո՞ւր դուք, ասեմ, պարզ առուակներ, գիմէք ո՞ւր:  
 Զիմ՝ արտասուս տանի՛ք յերկիր Հայրենեաց,  
 Մինչ եթերին վառին աստեղք և Լուսնակ,  
 Աստեղք գուհմ, և դու Լուսին գեղերես,  
 Ի՞նչ կշողաք երկնքի մէջ լուռ ու մունջ,  
 Մի՞ թէ և դուք օտար շրջէք ինձի պէս:  
 Ո՛հ, քաղցր է ինձ, քաղցր Հայրենիքս իմ սրտին,  
 Ո՞ր յիշատակ կրեմ յոգիս անմոռաց,  
 Յօտար այս տեղ երբ յուշ անեմ Հայաստան,  
 Աղի արցունք դուրս կցայտեն յիմ աչաց:

Ով իմ քնար, պանդուխտ սրտիս արգասատ,  
 Եւ դո՛ւ լուսձ կաս անմեռունչ դէպ ի ինձ,  
 Երգէ մաղթես, զիմ հայրենին Հայաստան,  
 Երգէ մինչ ցերբ մնաս ի քուն խոր ի նինջ,  
 Թող աչքերէս հոսին արցունք շիթ առ շիթ,  
 Տօղն թանան զքո թերի քաղցրաւաչ,  
 Թող և մատունկ պատանեկիս խնդաղիւրկ

Նոցա վերայ արձակ խաղան ի հառաչ  
 Երգէ հապա, քնարդ անոյշ ի գեղ գեղ,  
 Հերիք ես լամ, հերիք ողբամ միայնիկ,  
 Երգէ հապա զիմ Հայաստան աղեկէզ,  
 Օտար եմ ես, երգէ զիմ քաղցր Հայրենիք,

ՅՈՂԷ ՄՈՒՇԵՂԵԱՆՆԵՑ.

ՈՂԻ ԵՆՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆ ԲԸԳՐԱՏՈՒՆԵԱՑ.

Դու մեծապանձ՝ Յունաց Պարսից ահարկու,  
 Զա՛հ եօթնալոյս ի Հայս վառեալ լուսատու.  
 Անպարտելի հզօր փառաց քո նախանձ  
 Յաղթող կայսերց և իշխանաց վառեաց խանձ,  
 Արեգնակերպ ի հորիզն վառ ի վառ  
 Հազարաւոր եկեղեցեօքդ հոչակեալ,  
 Յանդուզն բրբաց տայիր խաւար անարև,  
 Իսկ բրժբտիցն ա՛հ մեծ պատէր ակներև.

Ո՛հ, քո անուն համայն երկրի էր ծանօթ,  
 Փառօք յիշէր ամենուրիք՝ ձայն տարօր  
 Անի, անիւ եղեր բաղդին ի հօրով,  
 Զեռն վատին ծածկեաց զքեզ ընդ հողով.

Ոչ Արիստան և ոչ Տուղրիլ մեծ յաղթող  
 Կարաց ջնջել զանունդ յերկրէ - ձգել քօղ,  
 Որչափ դուրն Կիրակոսին վատ արանց -  
 Եւ կամ Սարգսին՝ այն վատ Աեստին սեաւ նախանձ.

Արքունապանձ շինուածքդ համայն գեղանուշ  
 Որջ գազանաց և բոյն հաւուց չարագոյժ  
 Եղեն մինչ ցարդ, շտուռն դադար և շիրիմ  
 Ոչ թճնամեացդ՝ ոչ իսկ նեղչացդ սխերիմ.

Ա՛հ, թէ չծնէր արծաթապաշտըն Կիրակոս,  
 Եւ կամ շիրիմ լինէր Աեստին գետդ մշտահոս,  
 Հայ զարփենեոյդ մինչև ցայս վայր վայլէր լոյս,  
 Զի նոյնք հատին կենդանութեանդ շունչ և յոյս.

Անէք յերկնից, նզովք յերկրէ խտորև  
 Վատացն բաժին թափին յաւէտ մշտատև,  
 Աւերակացդ տխուր նշխարք ցաւաղին՝  
 Նզովս արկցն նենդ ամբարշտացն նոցին.

Մեք յողբ ի քեզ՝ դու ի սուգ մեզ շարունակ  
 Մինչև անիւ Անույդ զլցի փառունակ,  
 Որով յայնժամ՝ բաղմագարեան մեր թախիժ  
 Անհտացի տիրեսցէ օր բերկրապից.